

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY  
FACULTY OF HISTORY

**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

**ԵՎ**

**ՄՇԱԿՈՒՅԹ**

**ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ**

**ИСТОРИЯ И КУЛЬТУРА**  
**АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ**

**HISTORY AND CULTURE**  
**JOURNAL OF ARMENIAN STUDIES**

№ 2

ԵՐԵՎԱՆ - ԵՐԵՎԱՆ - YEREVAN  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS  
2019

*Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի  
Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ*

Նախագահ (գլխավոր խմբագիր)՝ պատմ. գիտ. դոկտ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**  
*Խմբագրական խորհուրդ՝*

**Արամ Մինոնյան** (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Արտակ Մովսիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆեսոր), **Ալբերտ Ստեփանյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Լևոն Չուգասյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Հանլետ Պետրոսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Արման Եղիազարյան** (պատմ. գիտ. դոկտ., դոց.), **Իգիթ Ղարիբյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հենրիկ Աբրահամյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պատմ. գիտ. դոկտ., դոց.), **Հովիկ Գրիգորյան** (պատմ. գիտ. թեկն., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պատմ. գիտ. թեկն., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պատմ. գիտ. թեկն., դոց.):

Председатель (главный редактор) - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**  
*Редакционная коллегия:*

**Արամ Սիմոնյան** (директор Института Арменоведческих исследований ЕГУ, членкор. АН РА, докт. ист. наук, проф.), **Ашот Мелконян** (академик АН РА, докт. ист. наук, проф.), **Артак Мовсисян** (докт. ист. наук, проф.), **Альберт Степанян** (докт. ист. наук, проф.), **Айк Аветисян** (докт. ист. наук, проф.), **Айрапет Маргарян** (докт. ист. наук, проф.), **Левон Чугасзян** (докт. искусствовед. наук, проф.), **Гамлет Петросян** (докт. ист. наук, проф.), **Арман Егиазарян** (докт. ист. наук, доц.), **Игит Гарибян** (докт. ист. наук, проф.), **Генрих Абраамян** (докт. ист. наук, проф.), **Айказ Оганесян** (докт. ист. наук, проф.), **Ашот Нерсисян** (докт. ист. наук, проф.), **Ашот Айруни** (докт. ист. наук, проф.), **Валерий Тунян** (докт. ист. наук, проф.), **Ваник Виравян** (докт. ист. наук, проф.), **Рафик Наапетян** (докт. ист. наук, проф.), **Акоб Арутюнян** (докт. ист. наук, доц.), **Овик Григорян** (канд. ист. наук, доц.), **Мхитар Габриелян** (канд. ист. наук, доц.), **Эдгар Оганнисян** (канд. ист. наук, доц.).

Chairman (Editor-in-Chief) - Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**  
*Editorial Board:*

**Aram Simonyan** (Director of YSU Institute for Armenian Studies, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Artak Movsisyan** (Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Arman Yeghiazaryan** (Doctor of Sciences), **Igit Gharibyan** (Doctor of Sciences, prof.), **Henrik Abrahamyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyanyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences), **Hovik Grigoryan** (PhD of History, associate professor), **Mkhitar Gabrielyan** (PhD of History, associate professor), **Edgar Hovhannisyanyan** (PhD of History, associate professor).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ  
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ  
ИСТОРИЯ / HISTORY

Հովհաննես Խորիկյան, ՍԱՏՐԱՊԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ .....	6
Oghannes Khorikyan, ON THE ISSUE OF THE CENTRE OF SATRAPIC ARMENIA Hovhannes Khorikyan, ON THE ISSUE OF THE CENTRE OF SATRAPIC ARMENIA Արտակ Մովսիսյան, Լիաննա Կարապետյան, ԾՈՓՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆԴՈՐԿՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ .....	14
Artak Movsisyan, Lianna Karapetyan, ON THE PROBLEMS OF THE CHRONOLOGICAL AND TERRITORIAL BORDERS OF THE KINGDOM OF SOPHENE Արգիշտի Կարդանյան, ՄԱՄԻԿՈՆՅԱՆ ՏՈՀՄԸ ՏՐԴԱՏ ՄԵԾ ԵՎ ԽՈՍՐՈՎ ԿՈՏԱԿ ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԻ ՕՐՈՔ .....	24
Argishti Vardanyan, THE HOUSE OF MAMIKONYANS DURING THE REIGN OF TRDAT THE GREAT AND KHOSROV KOTAK Արգիշտի Կարդանյան, ՄԱՄԻԿՈՆՅԱՆ ՏՈՀՄԸ ՏՐԴԱՏ ՄԵԾ ԵՎ ԽՈՍՐՈՎ ԿՈՏԱԿ ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԻ ՕՐՈՔ .....	24
Argishti Vardanyan, THE HOUSE OF MAMIKONYANS DURING THE REIGN OF TRDAT THE GREAT AND KHOSROV KOTAK Дмитрий Димидюк, ХОЛОДНОЕ ОРУЖИЕ В АРМЯНСКИХ ХРОНИКАХ ЭПОХИ БАГРАТИДОВ (КОНЕЦ IX- СЕРЕДИНА XI ВВ.): ТЕРМИНОЛОГИЯ ВОПРОСА .....	33
Dmytro Dymydyuk, BLADE WEAPONS IN THE MEDIEVAL ARMENIAN CHRONICLES OF THE BAGRATID ERA (END OF 9TH - MIDDLE OF 11TH CENTURIES): THE PROBLEM OF TERMINOLOGY Դմիտրի Դիմիդյուկ, ՍԱՌԸ ԶԵՆՔԵՐԸ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (IX Դ. ՎԵՐՋ-ՄԻ Դ.). ՀԱՐՑԻ ՏԵՐՄԻՆՈԼՈԳԻԱ	
Dmytro Dymydyuk, BLADE WEAPONS IN THE MEDIEVAL ARMENIAN CHRONICLES OF THE BAGRATID ERA (END OF 9TH - MIDDLE OF 11TH CENTURIES): THE PROBLEM OF TERMINOLOGY Դավիթ Թինոյան, ԿԻԼԻԿԻՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՀԵԹՈՒՄ Բ-Ի ԳԱՀԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ .....	48
Davit Tinoyan, ARMENIAN CATHOLICOSATE IN THE FIRST HALF OF THE RULE OF HETUM II Դավիթ Թինոյան, ԿԻԼԻԿԻՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՀԵԹՈՒՄ Բ-Ի ԳԱՀԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ .....	48
Davit Tinoyan, THE ARMENIAN CATHOLICOSATE IN THE FIRST HALF OF THE RULE OF HETUM II Դիանա Հայրապետյան, ՕՍՄԱՆՅԱՆ ՖՈՒՏՎԱԿԱԹԻ ԵՎ ԱԽԻԱԿԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՀԱՅ ԱՐՀԵՍԱՎՈՐՆԵՐԻ ԻՍԼԱՄԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ (XIII-XV ԴԴ.) .....	55
Diana Hayrapetyan, THE ROLE OF OTTOMAN FUTUWWA AND AKHI BROTHERHOOD IN THE PROCESS OF ISLAMIZATION OF ARMENIAN CRAFTSMEN (XIII-XV CC) Դիանա Հայրապետյան, ՕՍՄԱՆՅԱՆ ՖՈՒՏՎԱԿԱԹԻ ԵՎ ԱԽԻԱԿԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՀԱՅ ԱՐՀԵՍԱՎՈՐՆԵՐԻ ԻՍԼԱՄԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ (XIII-XV ԴԴ.) .....	55
Diana Hayrapetyan, THE ROLE OF OTTOMAN FUTUWWA AND AKHI BROTHERHOOD IN THE PROCESS OF ISLAMIZATION OF ARMENIAN CRAFTSMEN (XIII-XV CC) Ֆելիքս Մովսիսյան, XIX Դ. ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՆՇԱՆԱՎՈՐ ՄԱՍՈՆ ՍԵՐՈՎԲԵ ԱՅՆԱՎՈՐԸ .....	63
Felix Movsisyan, FAMOUS WESTERN ARMENIAN MASON OF THE 19TH CENTURY SEROVBE AZNAVOUR Ֆելիքս Մովսիսյան, XIX Դ. ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՆՇԱՆԱՎՈՐ ՄԱՍՈՆ ՍԵՐՈՎԲԵ ԱՅՆԱՎՈՐԸ .....	63
Felix Movsisyan, FAMOUS WESTERN ARMENIAN MASON OF THE 19TH CENTURY SEROVBE AZNAVOUR Հովիկ Գրիգորյան, ՀՅՂ ՑՈՒՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅՈՒՆԸ «ՆԺՈՒՅԳԻ ԳՈՐԾ»-Ի ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՒՆՈՒՄ (1904 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ - 1905 Թ. ՄԱՐՏ) .....	77
Ovik Grigoryan, ДЕЯТЕЛЬНОСТЬ ОТВЕТСТВЕННОГО УКАЗЫВАЮЩЕГО КОНСТАНТИНОПОЛЬСКОГО ОРГАНА АРФ ДАШНАКЦУТЮН НА ПЕРВОМ ЭТАПЕ ПОДГОТОВКИ «ДЕЛА КОНЬЯ» (СЕНТЯБРЬ 1904 Г. - МАРТ 1905 Г.)	

Hovik Grigoryan, THE ACTIVITY OF ARMENIAN REVOLUTIONARY FEDERATION'S (ARF-DASHNAKTSUTYUN) CONSTANTINOPLE'S INDICATIVE ORGANIZATION IN THE FIRST STAGE OF PREPARATION OF "THE CASE OF NZHUYK" (SEPTEMBER, 1904 - MARCH, 1905)	
Վանիկ Կիրաբյան, ՀԱՅԿԱԿԱՆ ԲՆԱԿԻ ՀԱՍԱՐ ԶԵՆՔ-ԶԻՆԱՍԹԵՐՔԻ ՀԱՅԹԱՅԹՈՒՄԸ 1918-1920 ԹԹ.....	95
Ваник Вирабян, ПОИСК ОРУЖИЯ ДЛЯ АРМЯНСКОЙ АРМИИ В 1918-1920 ГГ	
Vanik Virabyan, THE AMMUNITION PROCURANCE OF THE ARMENIAN ARMY (1918-1920)	
Հովիկ Գրիգորյան, Վահագն Հակոբյան, ՈՒՐՎԱԳԾԵՐ ԴՎԱԿԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ .....	108
Овик Григорян, Ваагн Акопян, ОЧЕРКИ ЖИЗНИ И ДЕЯТЕЛЬНОСТИ ДАВИДА АНАНУНА	
Hovik Grigoryan, Vahagn Hakobyan, NOTES ON DAVID ANANUN'S LIFE AND ACTIVITY	
Արամ Սիմոնյան, Ալեքսանդր Սաֆարյան, ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԹՅՈՒՐՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՂԱՓՈՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ .....	129
Арам Симонян, Александр Сафарян, ИЗ ИСТОРИИ ОЦЕНКИ ИДЕОЛОГИИ ТЮРКИЗМА В ТРУДАХ ИСТОРИКОВ АРМЕНИИ	
Aram Simonyan, Safaryan Alexander, ON THE IDEOLOGY OF TÜRKÇÜLÜK IN THE WORKS OF ARMENIAN HISTORIANS	
Валерий Тунян, ФЕЙК-НЬЮС ПРОПАГАНДЫ ТУРЦИИ И АЗЕРБАЙДЖАНА .....	137
Վալերի Թունյան, ԹՈՒՐԻՔԱՅԻ և ԱՂԲԵՉԱՆԻ ՔՐՈՂՉՈՒԹՅԱՆ ԿԵՂԾ ԼՈՒՐԵՐԸ	
Valery Tunyan, FAKE NEWS OF TURKEY AND AZERBAIJAN PROPAGANDA	

**ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ**  
**АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY**

Հայկ Ավետիսյան, Արսեն Բոբոխյան, Արտակ Գնունի, Լևոն Մկրտչյան, Նատալյա Ավետիսյան, ԹԱՂՄԱՆ ԾԵՍԻ ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ .....	145
Гайк Аветисян, Арсен Бобохян, Артак Гнуни, Левон Мкртчян, Наталья Аветисян, ОПЫТ СИТУАЦИОННОГО АНАЛИЗА ПОГРЕБАЛЬНОГО ОБРЯДА	
Hayk Avetisyan, Arsen Bobokhyan, Artak Gnuni, Levon Mkrтчyan, Natalya Avetisyan, THE EXPERIENCE OF SITUATIONAL ANALYSIS OF THE FUNERAL RITE	
Ռաֆիկ Նահապետյան, ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՎԱՆՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ .....	158
Рафик Напетян, ОБ ЭТНОГРАФИЧЕСКОМ ИССЛЕДОВАНИИ АРМЯНСКОГО НАРОДНОГО ТРАДИЦИОННОГО ЖИЛИЩА	
Rafik Nahapetyan, ON THE ETHNOGRAPHIC STUDY OF THE ARMENIAN NATIONAL TRADITIONAL APARTMENT	

**ԱՐԿԵՍ ԵՎ ՄՇԱԿՈՒԹ**  
**ИСКУССТВО И КУЛЬТУРА / ART AND CULTURE**

Արթուր Հովհաննիսյան, ԽՈՐԵՆ ՏԵՐ-ՀԱՐՈՒԹՅԱՆԻ ԳՐԱՖԻԿԱՆ .....	166
Артур Ованнисян, ГРАФИКА ХОРЕНА ТЕР-АРУТЯНА	
Arthur Hovhannisyan, KHOREN-DER HARUTYAN'S GRAPHIC	

**ՄՓՅՈՒՐՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**  
**ДИАСПОРАВЕДЕНИЕ / DIASPORA STUDIES**

Էդիկ Մինասյան, Լևոն Բատիև, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՈՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ԿՂԵՐԸ 1991-2019 ԹԹ. ....	174
Эдик Минасян, Левон Батиев, ОТНОШЕНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ С АРМЯНСКОЙ ОБЩИНОЙ ДОНА В ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКОЙ И КУЛЬТУРНОЙ СФЕРЕ В 1991-2019 гг.	

Edik Minasyan, Levon Batiev, RELATIONS OF THE 3rd REPUBLIC OF ARMENIA WITH ARMENIAN COMMUNITY OF DON IN SOCIAL-POLITICAL AND CULTURAL SPHERES IN 1991-2019	
Արման Եդիազարյան, Ալիկ Դարիբյան, Դիանա Դավթյան, Ինքնութիւնը և ՆԴԻՐՆԵՐԸ ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ	191
Arman Yeghiazaryan, Alik Gharibyan, Dianna Davtyan, ПРОБЛЕМЫ ИДЕНТИЧНОСТИ АРМЯНСКОЙ МОЛОДЕЖИ МОСКВЫ	
Arman Yeghiazaryan, Alik Gharibyan, Dianna Davtyan, ISSUES OF IDENTITY OF MOSCOW ARMENIAN YOUTH	
Հովհաննես Ալեքսանյան, ՀԱՅԱԶԳԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ-ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ ՄԻՋԻՆ ԱՍԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ	200
Ованнес Алексанян, АРМЯНЕ-ПАРТИЙНО-ГОСУДАРСТВЕННЫЕ ДЕЯТЕЛИ В СОВЕТСКИХ РЕСПУБЛИКАХ СРЕДНЕЙ АЗИИ	
Hovhannes Aleksanyan, ARMENIANS-PARTY-STATE LEADERS IN THE SOVIET REPUBLICS OF CENTRAL ASIA	

**ԲՆԱԳՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ**  
**ИЗДАНИЕ РУКОПИСЕЙ / PUBLICATION OF MANUSCRIPTS**

Հայկազ Հովհաննիսյան, ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐՅԱՆՑԻ ՏԵՍԱԿԱՆԸ	206
Айказ Оганесян, ВИДЕНИЕ НАЦИОНАЛЬНОГО ОБРАЗОВАНИЯ СТЕПАНОСА НАЗАРЯНЦА	
Haikaz Hovhannisyanyan. VISION OF STEPANOS NAZARYANTS ABOUT NATIONAL EDUCATION	

**ՈՒՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ**  
**УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL**

Լևոն Հովսեփյան, ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՍԵԹՈՂԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ	214
Левон Овсепян, ОСОБЕННОСТИ И МЕТОДОЛОГИЧЕСКИЕ ПОДХОДЫ К ОБУЧЕНИЮ ПОЛИТИКИ В СФЕРЕ БЕЗОПАСНОСТИ И ОБОРОНЫ ТУРЦИИ	
Levon Hovsepyan, THE SPECIFICS AND METHODOLOGY OF TEACHING TURKEY'S SECURITY AND DEFENSE POLICY	

**ԳՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՆ**  
**РЕЦЕНЗИЯ / REVIEW**

Փայլակ Ենգոյան, Էդիկ Մինասյան, «Երևանի պետական համալսարանն ու համալսարանականները Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945 թթ.)», Եր., ԵՊՀ հրատ., 2019, 586 էջ + 48 ներդիր:	222
ՄԵՐ ԵՐԱՆՏԱԿՈՐՆԵՐԸ	224
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ	226
INFORMATION ABOUT THE AUTHORS	228
Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ	230
NOTICE FOR THE AUTHORS	

## Հայկազ Հովհաննիսյան

### ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐՅԱՆՑԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ<sup>1</sup>

**Բանալի բառեր.** Մատենադարան, լազարյանների արխիվ, Ստ. Նազարյանց, ազգային կրթություն, սկզբունքներ, լեզու, պատմություն, ազգային մտածողություն:

Մաշտոցյան Մատենադարանի Լազարյանների արխիվի ուսումնասիրության ընթացքում մեր ուշադրությունը գրավեց մի վավերագիր, որի վերնագիրն առանձնապես էական ու չինչ չէր հուշում. «Նամակ հայրենի հովանավորներին»: Այն ուղարկվել է 1843 թ.: Գրում ենք էական, քանի որ այդպիսի նամակների հարյուրներով կարելի է հանդիպել Լազարյանների արխիվում: Հեղինակը XIX դ. նշանավոր հայագետ Ստ. Նազարյանցն էր: Այն, որ վավերագիրը նման չէր նմանատիպ մյուս նամակներին, ակնհայտ է առաջին իսկ մտքերից. պարզ է, որ այն դուրս է նամակին հատուկ ոճային շարադրանքից, թեպետ հստակ է, որ այն Ստ. Նազարյանցը գրել է Լազարյանների պատվերով և ուշագրավ է, որ գրված է ռուսերեն լեզվով. «Անսովոր բարեհաճությամբ շտապում եմ կատարել Ձեր բարեկամական հանձնարարությունը՝ հաղորդելու Ձեզ իմ գաղափարները և տեսակետները Մոսկվայի Լազարյան ուսումնարանի զարգացման մասին,-գրում է Ստ. Նազարյանցը: -Հաշվի առնելով, որ խորապես մտահոգված եմ ցանկացած ուսումնական հաստատության ճակատագրով, որի նպատակը ժողովրդական կրթությունն է, մյուս կողմից՝ որպես հայ ազգի ներկայացուցիչ, որը ոգեշնչված է նմանատիպ հետաքրքրություններով ... առանց որևէ փոքրիկության, կփորձեմ անկեղծորեն ներկայացնել իմ տեսակետները...»<sup>2</sup>: Ինչպես նկատում ենք, Ստ. Նազարյանցը մի կողմից կարծես շոյված է, որ Լազարյանների նման պատվախնդիր անձինք ցանկացել են իմանալ իր կարծիքը Լազարյան ձեռնարանի գործունեության հեռանկարների մասին, իսկ մյուս կողմից՝ ընթերցողին նախապատրաստում է ընդհանրապես կրթության մասին իր տեսլականը ներկայացնելու առումով: Բնականաբար, Ստ. Նազարյանցը քաջ գիտացում էր, որ Լազարյանները հենց այնպես իրեն չէին դիմի կրթության և լուսավորության մասին կարծիք լսելու համար, ուստի շտապում է միանգամից տեղեկացնել, որ. «Ի չար օգտագործել Ձեր վստահությունը կնշանակի դեմ գնալ իմ հանգստություններին, առավել ևս երբ այն վերաբերում է ինձ համար սուրբ հայրենիքի բարօրությանը (անշուշտ, նկատի ունի Հայաստանը՝ Հ.Հ.): Կարծում եմ նաև, մարդիկ, որոնք պահանջում են դա, իրենց ողջ կյանքի ընթացքում նպատակ են դրել բարձրացնել հայ ժողովրդին՝ որպես բարձրարժեք հնագույն արվեստ և գիտություն ունեցող ժողովրդի»<sup>3</sup>: Լազարյանների հարցում, իհարկե, Ստ. Նազարյանցի դիտարկումը լիովին արդարացի էր. գիտության և կրթության զարգացման հարցերը մշտապես մտահոգել են նրանց՝ առավել ևս երբ այն վերաբերել է ձեռնարանին, ուստի նման նախաձեռնությունը Լազարյաններին բնորոշ և գովելի նախաձեռնություն էր:

Այս նախաբանից հետո Ստ. Նազարյանցն անցնում է գլխավոր հարցի քննությանը. նա ներկայացնում է ազգային կրթության մասին իր տեսլականի բաղադրիչները: Ի դեպ, նա այն սկսում է ժամանակի մասին ուշագրավ խորհրդածությամբ. «Ապրելով ժամանակի մեջ,-գրում է նա- մենք պարտավոր ենք ապրել և սովորել գոյատևել նրա հետ միասին և հանուն նրա: Ժամանակը փոխվում է մշտապես, ուստի մարդիկ անընդհատ ձգտում են նորի, լավի և վատի, որին մարդկությունը ենթարկվում է պատահականորեն, որում նա պետք է մասնակցություն ցուցաբերի կամ՝ հաճույքով կամ՝ նողկանքով, ինչից հետևում է, որ մենք մտահոգ

\* Հոդվածը ներկայացվել է 06.09.2019 թ., գրախոսվել է 22.11.2019 թ., ընդունվել է տպագրության 20.12.2019 թ.:

<sup>1</sup> Հոդվածը տպագրվում է ԿԳՄՍ գիտության կոմիտեի 18Տ-6Բ098 դրամաշնորհի շրջանակում:

<sup>2</sup> Մաշտոցի անվան Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 137, վավ. 80, թ. 1:

<sup>3</sup> Նույն տեղում:

ենք անցնող ժամանակի հարցում. ոգևորվում ենք լավով, որը ներկայանում է մեզ և զգուշանում ենք չարից, որը վտանգում է մեր բարօրությունը»<sup>1</sup>:

Ստ. Նազարյանցի դիտարկումն, անշուշտ, խոհափիլիսոփայական բնույթ ունի է, թեպետ դժվար չէ կռահել, որ հարցարդյունն առաջին հերթին ուղղված էր Լազարյաններին: Նախ՝ փորձել է գնահատել նրանց կատարած բարեգործական նախաձեռնությունները. «Այն (բարեգործությունը՝ Հ.Հ.) մեր երկրագնդի գեղեցիկ հատկությունն է և ունի երկու ուղեգիծ,- գրում է այնուհետև Ստ. Նազարյանցը:- Մենք պետք է ծառայենք ժամանակին, ուշադիր հետևենք նրա յուրաքանչյուր քայլին, որպեսզի այն չոչնչացնի մեզ՝ որպես թե իր ուշացած զավակների ...: Մենք պետք է հմտորեն օգտվենք ժամանակից, վերջին հաշվով՝ տիրենք նրան. երկու դեպքում էլ մեզ տրված է բանականություն-ծառայել ժամանակին, սակայն ոչ թե ստրկամտորեն, այլ գովերգելով նրան»<sup>2</sup>: Անշուշտ, այն, ինչի մասին խորհրդածում է Ստ. Նազարյանցը, նորություն չէր Լազարյանների և ընդհանարպես հանրության համար: Նրա հրապարակախոսությունը սահմաններ չուներ, կարելի է ասել՝ հավասարը չուներ այդ «ժամանակի» մեջ: Այստեղ էլ դժվար չէ կռահել Ստ. Նազարյանցի փիլիսոփայական խորհրդածությունների և ասելիքի բուն նպատակը. ճեմարանը պետք է զարգանա ժամանակին համահունչ: «Դա վերաբերում է կյանքի բոլոր ոլորտներին, մարդկային բոլոր համոզմունքներին,- գրում է Ստ. Նազարյանցը,- քանի որ բոլորս գտնվում ենք ժամանակի ազդեցության տակ, ներառյալ նաև հաստատությունները, որոնք հիմնված են երիտասարդներին կրթություն տալու նպատակով: Ոչ ոք չպետք է հակառակվի ժամանակի ոգուն և պահանջմունքներին... Ոչ քո չպետք է ծերանա ոգով, հակառակ դեպքում՝ կկորցնի իր նշանակությունը և կվերանա: Եթե այդ հաստատությունների նպատակը մարդկանց ժամանակի համար կրթելն է՝ թե ներկայի և թե ապագայի համար, ուստի անհրաժեշտ է, որ նրանք համապատասխանեն ժամանակին և ապրեն նրա հետ՝ անընդհատ զարգացման մեջ», - եզրակացնում է Ստ. Նազարյանցը<sup>3</sup>: Մեծ մտածողի համոզմունքով՝ ժամանակի խնդիրը մեր հարյուրամյակի դիտարժանանցքերի ճանաչումն է, ավելին, ինչպես գրում է Ստ. Նազարյանցը՝ «մեր ժամանակը զարթուցիչ է, նրա երկաթյա լեզուն հզոր է»<sup>4</sup>: Այդ համատեքստում նա միանգամից անդրադառնում է հայ ժողովրդին. «Հայկի որդիները պետք է արթնանան մտավոր նիհիից և բռնեն մարդկային զարգացման ուղին: Եվրոպական կրթության մեծերը՝ գերմանացիները, անգլիացիները, ֆրանսիացիները դարերով աշխատել են գիտության կիզիչ արևի տակ ... և հիացմունքի արժան են...»<sup>5</sup>: Նազարյանցը բերում է նաև հույների օրինակը, թե ինչպես հնագույն հելենիստական մշակույթից սահուն անցումով՝ ընդունեցին եվրոպական նոր մշակույթը. «Ահա ժողովրդի տեսարժանության օրինակ, թե ինչպես կրկնապատիկ քայլերով կարելի է շարժվել դեպի լուսավորություն, արվեստի և գիտության բնագավառի ճանաչողություն»<sup>6</sup>:

Ստ. Նազարյանցը նույն գործընթացը փորձում է դիտարկել հայերի համար. «Ինչպիսի պարտականություն է ընկած հայերի վրա... մի՞թե առահավետ պետք է մնալ մթության մեջ և իրեն դատապարտել առահավետ խարանի,- գրում է Նազարյանցը և ապա ավելացնում,- հաճախ լսում ենք որոշ բարերարների կարծիքն այս մասին. թե մեր մեջ էլ պետք է ներթափանցի ժամանակի ոգին, ներկայի բարձրարժեք գաղափարները, հարկավոր է միակամ ուժերով ձգտել քանդել այդ շղթաները, որոնք դրվել են նրանց վրա տգիտության կամ կիսակրթության /գուցե՝ թերի կրթության/ հետևանքով, անհրաժեշտ է մեր հայացքն ուղղել դեպի արևմուտք և առաջին հերթին ճանաչենք ինքներս մեզ...»<sup>7</sup>: Անշուշտ, Ստ. Նազարյանցին չենք կարող մեղադրել հայ ազգի անհարկի բարձրացման կամ նրան չափից ավելի նվաստացնելու մեջ: Արտահայտած յուրաքանչյուր բառն իրական ճշմարտություն էր և ակնհայտ իրողություն՝ այնուհանդերձ, ասվածում մեկ բան ակնհայտ է. Ստ. Նազարյանցն այդ գործընթացները կամ հայությանը բաժին հասած ճակատագրի փոփոխության ակնկալիքը տեսնում էր Լազարյանների լուրսավորչական նախաձեռ-

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> Նույն տեղում, թ. 2:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> Նույն տեղում, թ. 3:

<sup>6</sup> Նույն տեղում, թ. 4:

<sup>7</sup> Նույն տեղում:

նությունների մեջ: Անշուշտ, ակնհայտ էր, որ կրթական այն համակարգը, որն առկա էր Հասարակական երկու հատվածներում, Ստ. Նազարյանցին, առավել ևս իր կողմից նշված չափանիշներին, բավարարել չէր կարող և «կիսակրթական, կիսագրագիտական» այդ հաստատությունները բարեփոխման կարիք ունեին: Այդ է շեշտում Ստ. Նազարյանցը: Եվ դա Ստ. Նազարյանցի միակ և իրավացի շեշտադրումը չէ այս նամակ-հետազոտությունում: Ամփոփելով իր միտքը կրթության անհրաժեշտության մասին՝ նա գրում է. «Ներկայումս հայերի կոչումը հետևյալումն է. ճանաչել իր անցյալը իր ողջ կարևորությամբ հանդերձ և ընդունել եվրոպական ոգին, վերափոխել դրանք ազգային ձևաչափի, դրանով հանդերձ՝ ստեղծել ժողովրդական իսկական կրթություն՝ եվրոպական գիտության հիման վրա: Հայրենի լեզվի և գրականության, պատմության և նրա հնությունների հետ հիմնավոր ճանոթացում ...,- ահա ցանկալի նպատակ տանող միակ ճանապարհը»<sup>1</sup>: Գրվածից ակնհայտ է նաև, որ Ստ. Նազարյանցը հույժ կարևոր է համարում ժողովրդի անցած ուղու արժևորումը, ասել է թե՛ հայոց պատմության նորովի գնահատության անհրաժեշտությունը: Առաջ անցնելով նշենք, որ հրատապ այդ անհրաժեշտությունից էր թելադրված նաև Ստ. Նազարյանցի կողմից հայոց պատմության շարադրումը, որը հանգամանքների բերումով այդպես էլ չհաջողվեց ավարտել. գրվեց միայն նրա ներածական մասը, թեպետ նա նույնիսկ այդ շարադրանքում կաևոր դրույթներ էր առաջադրում:

Ստ. Նազարյանցը ընդգծում և արժևորում է հայոց լեզվի և գրականության դերը. «Լեզուն, ինչպես և գրականությունը ժողովրդական լուսավորության ամենից հզոր միջոցն են,- գրում է նա:- Դրանք յուրաքանչյուր ժողովրդի գլխավոր պատգամն են, նրանցում ներկայացված են բոլոր զգացումներն ու մտքերը»<sup>2</sup>: Չմոռանանք, որ այս մտքերը և կրթության երկու կարևոր բաղադրիչների՝ հայոց պատմության և մայրենի լեզվի ուսումնասիրության և խորացման խնդիրը Ստ. Նազարյանցի կողմից հստակ և կտրուկ է դրված: Եվ դա այն դեպքում, որ քանով նկատեցինք, մեծ հումնախստը նույնքան ջատագովությամբ դնում է եվրոպական կրթության խորացման անհրաժեշտությունը: Այլ խոսքով, ուզում ենք ընդգծել, որ հայրենի պատմության և լեզվի ուսումնասիրությունը չպետք է դիտարկել առանձին-առանձին, այլ ընդհանուր համատեքստում, ինչպես ճշմարտացի դիտարկել է Ստ. Նազարյանցը: Միայն այդ ճանապարհով կարելի է դասվել դասական ժողովուրդների կամ ինչպես ինքն էր հաճախ կրկնում՝ ուսյալ ժողովուրդների շարքը:

Ներկայումս, երբ հանրային լայն քննարկամ է դրված կրթության, այդ թվում և բարձրագույն կրթության բարեփոխումների հարցը, երբեմն տեսակետներ են հնչում հայոց պատմության և հայոց լեզվի բարձր կարգավիճակը բուհերում փոխարինելու սովորական ստուգաբանությամբ կամ թողնել ուսումնական ստորաբաժանումների հայեցողությանը: Կտրականապես մերժելի և բազում առումներով խոցելի տեսակետներ: Միթե մեր մեծերը, իսկ Ստ. Նազարյանցն այդ շարքում իր պատվաբեր տեղն ունի, մարդիկ, որոնք գերազանց տիրապետել են ռուսերենին, մի քանի օտար լեզուների, մեկ վայրկյան անգամ կասկածի տակ չեն դրել հայրենի պատմության և լեզվի խորը ուսումնասիրության անհրաժեշտությունը, առավել ևս դրանք փոխարինել մեկ այլ դիսցիպլինով, անգամ, եթե այն սկսվի «համաշխարհային» բառով: Քանզի քաջ գիտակցել են հանապազորյա հացի պես՝ հոգևոր սննդի անհրաժեշտությունը կրթության, այն էլ հայ ժողովրդի պատմության և մայրենի լեզվի պարագայում, երբ ամեն ինչ պե դոմոկլյան սրի պես կախված է գլոբալացման և ուժացման վտանգը (սփյուռքահայերի ներկա վիճակը՝ մեզ ահազանգ-Հ.Հ.), երբ փակման եզրին են հայտնվել հայագիտական շատ կենտրոններ և հայկազյան անվանի վարժարանները: Չմոռանանք, որ խոսքը Լազարյան ճեմարանում կրթության հետագա կատարելագործման մասին է, որն արդեն դասվել էր ռուսական հայտնի համալսարանների շարքը (փաստորեն այն արևելագիտական կրթության ամենից ճանաչված բարձրագույն դպրոցն էր՝ Հ.Հ.): Եվ դա այն դեպքում, երբ պատմությունը մեզ այդպես էլ երբեք հանգստի ժամանակ չի տրամադրել, նույնիսկ խորհրդային հասարակության պայմաններում: Սա որպես պատմաբանի ահազանգ. որի մասին, ի դեպ, իր ժամանակին խիստ զգուշացնում էր Ստ. Նազարյանցը. «Ժողովրդական այս գոհարների հանդեպ անպատասխանատու մոտեցումը բազում անդառնալի հետևանքների է հանգեցնելու,-

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> Նույն տեղում, թ. 5:



դառնությամբ գրում է Ստ. Նազարյանցը: «Հայ երիտասարդը Ռուսաստանում, առանց հիմնավոր կրթության, տիրապետելով ընդամենը օտար որոշ, սակայն բավականին աղքատիկ գիտելիքների...», իր լեզվական գիտելիքներով լիովին անհաղորդ է իր գրականությանը, իր ժողովրդին: Նրա համար գոյություն չունի երբեմնի մեծ և գործիչներով ու գիտությամբ Հայաստանի անցյալ: Դա Ռուսաստանում հայկական երիտասարդության ցավալի թյուրիմացությունն է, որն անկասկած, հանգեցնելու է հայի անվան անդառնալի անփառունակության»<sup>1</sup>:

Ստ. Նազարյանցն, իհարկե, գիտի այս ամենի պատճառը և, թե ինչով է պայմավորված ստեղծված այս իրավիճակը. «Դա ոչ այլ ինչ է, քան անփառունակ ուղղություն. այն հայ երիտասարդներին հրամցվում է թշնամիների և ժողովրդի հանդեպ չարականների կողմից, կամ ծայրահեղ դեպքում՝ այնպիսի մարդկանց միջոցով, որոնք ոչ մի իրավունք չունեն լինել դատավոր և հայերի հոգևոր շահերի տեսանկյունից դեռևս շարունակում են ղեկավարել հայկական հաստատությունները...»<sup>2</sup>: Ասվածից ակնհայտ է, որ Ստ. Նազարյանցին չի բավարարում կրթության առկա իրավիճակը ինչպես բուն Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս, ավելին՝ առաջարկում է նոր դատավորների, ասել է՝ կրթական հաստատությունների ղեկավարության և կրթական համակարգում հայեցողության փոփոխություն: Այդուհանդերձ, իհարկե, չենք կարծում, թե խոսքն ուղղակի վերաբերում է Լազարյան ճեմարանին, սակայն, մյուս կողմից, Ստ. Նազարյանցը Լազարյաններին հասկացնում է, որ իր հորդորն ուղղված է ճեմարանին սնուցող «կրթական հաստատություններին», որոնք որակյալ կրթական հունք չեն մատուցում: Այդ հարցում, իհարկե, Ստ. Նազարյանցն իրավացի էր:

Նազարյանցը Լազարյաններին առաջարկում է մտածել և «ներդրումներ» կատարել հայկական կրթական ընդհանուր համակարգում՝ վերից վար, եթե ցանկանում ենք ունենալ կրթական այնպիսի համակարգ, ինչպիսին առկա է Ռուսաստանում և Արևմտյան Եվրոպայում: Որպես առաջին և կարևոր քայլ, Ստ. Նազարյանցն առաջարկում է փոխել կրթական համակարգում գյություն ունեցող մեթոդներն ու ուսուցման ձևերը. «որից հայ երիտասարդը ոչ միան չի ստանում հայրենական և ժողովրդական հպարտության որևէ զգացում, այլև համատարած կերպով քամահրանքով է վերաբերվում իր ազգայինին, նույնիսկ որոշակի նողկանք է դրսևորում նրա հանդեպ», - գրում է Ստ. Նազարյանցը<sup>3</sup>: Այստեղից էլ Ստ. Նազարյանցի հորդորը հայ երիտասարդությանը. «Հայոց զավակներ, սովորեք հարգել մայրենի Ձեր լեզուն: Սովորեք սիրել նրան հոգու խորքից, քանի որ ի սկզբանե այն անչափ հարուստ է բառերով, հետևապես՝ նաև հասկացություններով...: Սթափվեք, երիտասարդներ, քանի որ դուք Հայեր եք»<sup>4</sup>:

Կրթության մասին իր տեսլականը ներկայացնելուց հետո Ստ. Նազարյանցն անցնում է իր հիմնական հանձնառությանը. ներկայացնում է Լազարյան ճեմարանի զարգացման մասին իր պատկերացումները: Նախ՝ ողջունում է Լազարյանների նախածեռնողականությունը ճեմարանի հիմնադրման գործում. «Այն ժամանակ, երբ գիտության լույսը քաղաքական նշանակության հետ միասին հանգչեց Հայաստանում, - գրում է նա, - նախախնամությունը մեզ նվիրաբերեց Լազարյան օրինյալ գերդաստանին, որոնք ոգևորված այդ բեղմնավոր գաղափարով՝ բացել Հայկի զավակների համար գիտության օջախ, որի գոյությունն ամրապնդված է Ձեր գերդաստանի առատածեռն նվիրատվությամբ...: Դա հիանալի սկիզբ է՝ փառքով պսակել մեծ նախնիների հիշատակը-ահա սխանք, որը հատուկ է մեծերին...», - հպարտությամբ գրում է Ստ. Նազարյանցը<sup>5</sup>:

Ստ. Նազարյանցը գովեստի խոսքեր է ուղղում նաև Մխիթարյան միաբանությանը, որոնց շնորհիվ հին հայկական գրականությունը ճանաչելի և հասանելի դարձավ եվրոպական գիտնականների համար: «Եվրոպայի, վերջերս էլ Ռուսաստանի տարբեր մասերում բացվել են Հայոց լեզվի և գրականության ամբիոններ, ինչն ապացուցում է, որ Հայկի սերունդների հնագույն լեզուն արժանացել է հայերի ուշադրությանն ու գործունեությանը»<sup>6</sup>: Ստ. Նազարյանցի խոսքերից դժվար չէ կռահել, թե ինչ է ակնարկում՝ օրինակ բերելով Մխիթարյաններ

<sup>1</sup> Նույն տեղում, թ. 6:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Նույն տեղում, թ. 6-7:

<sup>5</sup> Նույն տեղում, թ. 7:

<sup>6</sup> Նույն տեղում:

րին: Կարծում ենք, որ դրանով նա ցանկանում էր հասկացնել Լազարյաններին, որ այն, ինչ արեցին Մխիթարյանները Եվրոպայում, նույնը վիճակված է կատարել իրենց՝ Ռուսաստանում. «Որքանով ... մեղավոր ենք մեր սրբազան հայրենիքի հանդեպ, այդքան էլ մեծ պատասխանատվություն է ընկած մեզ վրա՝ քավել մեր կատարած հանցագործությունը, ցուցաբերած թեթևամտությունը: Դա դժվար չէ մեզ համար, քանի որ... Վենետիկի մեր աստղերը նախանշում են մեր ուղին, որը տանում է դեպի ցանկալի նպատակը: Անցել է հարյուր հիսուն տարի այն ժամանակից, երբ մեծն Մխիթարը ոգեշնչված հայերնասիրությամբ, անցնելով հալածանքների և վտանգների միջով, հիմնեց գիտական հասարակություն, որի նպատակն էր՝ ուսումնասիրել հայրենի հնագույն հուշարձանները, ստեղծել ժողովրդական կրթություն: Ազգային արժեքների պահպանում, ուսումնական հաստատության հետագա զարգացում, լեզվի հարստացում թարգմանություններով, որոնք ոչնչով չեն զիջում իրականներին - ահա այդ աշխատասեր հասարակության վաստակը, վաստակ, որը յուրաքանչյուր մտածող հայի կողմից արժանի է հավերժ երախտագիտության», - գրում է Ստ. Նազարյանը<sup>1</sup>:

Եվ, այդուհանդերձ, ակնկալելով Լազարյանների աջակցությունը, Ստ. Նազարյանցն առաջադրում է այն խնդիրները, որոնք կանգնած են հայագիտության առջև. «Մխիթարյանների բոլոր ծառայություններով հանդերձ, հայերի լեզվի և կրթության տեսակետից առկա են չլուծված շատ հարցեր, որոնք անչափ կարևոր են, - գրում է Ստ. Նազարյանը: Հայերին պակասում են հրապարակային միջոցները (անշուշտ, Նազարյանցը նկատի ունի մամուլն ու գիտական ամսագրերը՝ Հ.Հ), որոնք կարող են մեկտեղել ամենուրեք ցրված հայության ընդհանուր շահերը...»<sup>2</sup>: Ստ. Նազարյանցը նկատում է, որ, ճիշտ է՝ Մխիթարյաններն այդպիսի ամսագիր ունեն, սակայն «դա լիովին օտար է ռուսահայերին»՝ մի կողմից հեռավորության, մյուս կողմից «պապական ուղղվածության պատճառով, որից դուրս եկած լույսը օտար է լուսավորչական դավանանքի հայերի համար, ուստի չի կարող ազդեցություն ունենալ հայ երիտասարդության վրա»<sup>3</sup>: Որքանով նկատում ենք, Ստ. Նազարյանցի դիրքորոշումը Մխիթարյանների հանդեպ որոշակի է այդ նպատակադրությունը նա չի թաքցնում. ավելին՝ հասկացնում է, որ այդ առաքելությունը պետք է իրագործեն իրենք՝ Լազարյանները. «Պետք է նկատել, - գրում է Ստ. Նազարյանցը, - Մխիթարյանները բավականին քիչ են հասկանում ներկա ժամանակի պահանջները ... և հաճախ սխալվում են հայրենի երիտասարդության հետ հաղորդակցվելու միջոցների մեջ»<sup>4</sup>: Ստ. Նազարյանցն այդ ամենին հավելում է նաև Մխիթարյանների կողմից հրատարակված գրքերի անհասնելի լինելու փաստը՝ իրենց թանկարժեք լինելու պատճառով. «հանգամանք, որն իր հերթին, զրկում է հայ խոսքի սիրահարներին դրանք ձեռք բերելու հնարավորությունից», - գրում է նա<sup>5</sup>: Այդ տեսակետից, Ստ. Նազարյանցը ողջունում է Լազարյանների կողմից ժողովրդական լուսավորության օջախ հիմնումը՝ գիտական հասարակության հետ միասին, որը «որպես հրապարակային միջոց, համապատասխան է հայերի կրթական պահանջմունքներին և ... կբարձրաձայնի նրա հոգևոր հետաքրքրությունները...», - նշում է նա<sup>6</sup>:

Այդպիսով, Ստ. Նազարյանցը ձևակերպում և պատասխանում է Լազարյանների գլխավոր հարցին, թե ինչպես է տեսնում իրենց կողմից հիմնած ձեմարանի ապագան: Նա հստակ ձևակերպում է այդ տեսլականը. «Այդպիսի ազգային հաստատությունը-ձեմարանը իր հասարակության հետ միասին և ծառայելով գլխավորապես այդ նպատակին և գործելով ժողովրդի մտավոր զարգացման համար ընդհանրապես, պետք է համապատասխանի իր կոչմանը և ժամանակի պահանջներին, ձգտի իրագործել գիտական (ասել է թե՛ հիմնավոր-Հ.Հ.) կրթություն՝ հիմնված ժողովրդական և երիտասարդների հայրենասիրական զգացումների և մտքերի վրա: ... Հայաստանի հնությունների լեզուն, գրականությունը, պատմությունը և աշխարհագրությունը պետք է հատուկ ուշադրության առարկա դառնան..., դա վերաբերում է նաև իմն լեզուներին, որոնք ևս չպետք է տեսադաշտից դուրս չթողնել, քանի որ հայոց լեզվի շարահ-

<sup>1</sup> Նույն տեղում, թ. 7-8:  
<sup>2</sup> Նույն տեղում, թ. 8:  
<sup>3</sup> Նույն տեղում:  
<sup>4</sup> Նույն տեղում:  
<sup>5</sup> Նույն տեղում:  
<sup>6</sup> Նույն տեղում, թ.9:

յուսական շատ ձևեր նմանություն ունեն նրանց հետ...»<sup>1</sup>: Այլ խոսքով՝ Ստ. Նազարյանը նախանշում է Լազարյան ճեմարանի և ընդհանրապես հայկական կրթական հաստատությունների գլխավոր նպատակը՝ հայոց լեզվի, գրականության, պատմության խորը ուսումնասիրություն, սակայն ոչ պարփակված սեփական գրի ու գրականության, պատմության մեջ, այլ հարևան երկրների լեզվի ու պատմության ուսումնասիրության համատեքստում, որոնք դարեր շարունակ ապրել են հայերի հետ միևնույն աշխարհագրական միջավայրում: Ի դեպ, Ստ. Նազարյանցի այս դիտարկումները վավերագրում ընդգծված և առանձնացված են: Եվ, այդուհանդերձ, այս վերջին միտքը Ստ. Նազարյանցին չի մտահոգում, քանի որ, ինչպես ինքն է գրում՝ «Ազգային ինչ-որ պատկերացում, ինչ-որ միտք, որն արդեն ներթափանցված է հայ երիտասարդի սրտի ու հոգու մեջ, ավելի խորը արմատներ պիտի ձգի նրանց մեջ և ավելի ուրախալի հույսեր կարտահայտի, քան դրանք արտահայտվում են օտար ձևերով և բավականին անհասանելի են նրա հոգուն: Դա հավերժական և անհերքելի ճշմարտություն է, որ յուրաքանչյուր ժողովուրդ միևնույն հարցի մասին ... մտածում է իրեն հատուկ մտածողությամբ...»<sup>2</sup>: Ավելին, Ստ. Նազարյանը հավելում է, որ ինքը դրանում օտար լեզուների իմացության պարտադրանք չի տեսնում և միտք էլ չունի «հայերից խլել ազգային կրթության իրավունքը»<sup>3</sup>: Կարծում ենք այս միտքը ևս խիստ արդիական է ներկա ժամանակում. ազգային կրթության, այն է՝ մայրենի լեզվի և պատմության ստորադասումը օտար լեզվին, կարծում ենք, խիստ քննադատելի է: Ստ. Նազարյանը բերում է Նապոլեոնի օրինակը, երբ նա գերմանացիներին պարտադրեց մոռանալ սեփական մայրենին, կամ օրինակ է բերում ռուսներին, որոնք մտածում են գերմաներեն, գրում ֆրանսերեն, սակայն այդ ամենը մնաց միայն որպես ռուսական արքունիքի կենսակերպ և երբեք ժողովրդական զանգվածների սեփականությունը չդարձավ: Ուստի՝ այն հարցին, թե ինչպե՞ս զարգացնել ազգային գիտությունը ճեմարանում, Ստ. Նազարյանը առաջարկում է. «Նախ՝ կարելի է Վենետիկից հրավիրել անհրաժեշտ քանակի գիտնական-ուսուցիչների, երկրորդ՝ որպեսզի ժամանակի ընթացքում ունենաք սեփական կադրերը, կարծում են դժվար չէ որոշակի քանակությամբ շնորհալի հայերի ժամանակ առ ժամանակ ուղարկել Գերմանիա սովորելու և կատարելագործվելու առանձին ոլորտներում..., և այնուհետև Ձեր ինստիտուտում կգրավի ուսուցչի պաշտոն..., այդ ամենը կարելի է իրագործել, եթե լինի հաստատուն կամք՝ դուրս բերել ազգին գիտության զարգացման ինքնտիպ ուղի»<sup>4</sup>:

Ուշագրավն այստեղ այն է, որ ինչ էլ որ առաջարկում է Ստ. Նազարյանը, անպայման ընդգծում է ազգային, ժողովրդականի գերակայող գործոնը. «Հայոց ազգային ինստիտուտը իր ինքնատիպությամբ հանդերձ կարող է կայանալ միմիայն բացառապես ազգային զագացումների և ազգային մտածելակերպի հիմնա վրա»<sup>5</sup>: Ի դեպ, վավերագրում այս մասն ընդգծված է Լազարյանների կողմից, նշանակում է՝ այս միտքը առանձնակի ուշադրության է արժանացել նրանց կողմից: Ստ. Նազարյանը, որքան էլ ուշագրավ է, նամակում ներկայացնում է ազգային ճեմարանը գլխավորող անձի բնութագիրը, թեպետ ինքնին հասկանալի է, թե ով էր այդ խնդրի կարագավորողը: Եվ, այդուհանդերձ, «Այդպիսի հաստատության ղեկավարը պետք է հանդիսանա մարդ, որն իր մեջ ամփոփում է հայ ժողովրդի ողջ հոգևոր էության խորը իմացությունը, բացառապես գիտական, մանկավարժական կրթությամբ հայրնիքին և ազգին իրապես նվիրված անձնավորություն, ով ի վիճակի է առաջնորդելու այն և իր պարտքը կհամարի կրթությամբ և գիտությամբ հայ երիտասարդության մեջ արթնացնել, սնել և ամրանդել հայերնասիրական զգացումներ»<sup>6</sup>: Կարծում ենք՝ ավելին ասել հնարավոր չէր, և այդ է պատճառը, որ հայ ազգի առջև կանգնած մարտահրավերների առումով Ստ. Նազարյանցն իր արժանի տեղն ունի հասարակական-քաղաքական կյանքում: Ուշագրավն այստեղ այն է, որ, որքան էլ տարակուսելի է, Ստ. Նազարյանցը դժվարանում է այդպիսի որակներով օժտված հայի անուն տալ, ուստի առաջարկում է. «Այստեղ արդեն չհիմնավորված մի դիտարկում կա: Հայերը չունեն մարդ, ով կարող է իրագործել այդ կարևոր պարտականությունը:

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> Նույն տեղում, թ.9-10:

<sup>3</sup> Նույն տեղում, թ.10:

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> Նույն տեղում, թ.10-11:

Ուստի կրկնում եմ վերևում ասված իմ նկատառումը. եթե հայերի մեջ չկա այս կոչմանն արժանի մարդ, ապա դժվար չէ և կարելի է պատրաստել նրան՝ մի քանի երիտասարդ հայերի, որոնք հաջողությամբ ավարտել են ռուսական լավագույն համալսարաններից մեկը, ուղարկել ուսանելու Գերմանիա, որպեսզի նշանավոր մանկավարժների ղեկավարությամբ ձեռք բերեն հիմնավոր գիտելիքներ նաև դաստիարակության առումով»<sup>1</sup>:

Ստ. Նազարյանց ուշագրավ մեկ դիտարկում ևս ունի. նա պատասխանում է այն հարցին, թե հնարավոր է արդյոք ճեմարան հրավիրել արտասահմանցի գիտնականների: Մարդ, որն իր գրեթե յուրաքանչյուր հոդվածում խոսում և կարևորում է եվրոպական կրթությունը և լուսավորությունը, հայերին դասավանդելու հարցում կարևոր նախապայման է դնում. «եթե նմանատիպ խնդիր առաջանա, ապա հարկ է անպայման նրանց առջև դնել պայման՝ որ նրանք իրենց դասավանդման ընթացքում սովորեն իրենց դասախոսությունները կարդալ հայերեն լեզվով»<sup>2</sup>: Այստեղ էլ ընդգծվում է Ստ. Նազարյանցի մտածողության հայագիտական ուղղվածությունը, ամենուրեք և յուրաքանչյուր հարցադրաման մեջ շեշտադրում է հայեցի դաստիարակության, հայկական կրթության և, ընդհանրապես, հայկական լուսավորության կարևորությունը հայ երիտասարդության ձևավորման գործում: Կարծում ենք, որ այժմեականության տեսակետից Ստ. Նազարյանցի այս շեշտադրումը ևս բռնել է ժամանակի քննությունը: Եվ հետաքրքրականն այն է, որ նա յուրաքանչյուր նախադասության մեջ ընդգծում է ազգային կրթության կարևորությունը. «Այս հոգով ինստիտուտի գործելն ... արդեն ունի իրականազգային նշանակություն: Եվ եթե Ձեզ համար կարևոր է ինստիտուտին փոխանցել Ձեր պատիվն ու փառքը ուսյալ Եվրոպայի առջև, եթե Ձեզ համար այդքան կարևոր է, կրկնում եմ, Ձեր անունն անմահացնել ժողովրդական կրթության տարեգրության մեջ, ապա ես համոզված եմ, որ իմ այս գաղափարները, որոնք համապատասխան են ներկայիս պահանջներին, ինչպես նաև **ներկա և ապագա Հայաստանին** (ընգծումը մերն է-Հ.Հ.), կարժանանա Ձեր ուշադրությանը»<sup>3</sup>:

Ստ. Նազարյանցի արտահայտած հաջորդ մտքերն արդեն պատգամ-հորդորի իմաստ ունեն. «Փրկել հայ ազգը, հասնել նրանց միջև ժողովրդական զարգացման՝ արվեստի և գիտության բնագավառներում-դրանք հարցեր են, որի լուծումը կդառնա Ձեր համար դափնեպսակ՝ Ձեր սխանքների համար...»<sup>4</sup>: Ավելին, նա պատրաստականություն է հայտնում իր մասնակցությունը բերել նախանշած ծրագրերի իրագործման համար, ուստի շտապում է հաղորդել. «Եթե Դուք, սիրելի պարոնայք, կհամարեք, որ Ձեզ կարող եմ օգտակար լինել Մոսկվայի հայկական ինստիտուտի նախանշած ծրագրերի իրականացման համար, ապա ես երջանիկ կլինեմ աջակցել Ձեզ մոտիկից՝ ինչպես խորհուրդներով, այնպես էլ գործով: Կազանում իմ վիճակը ինձ համար բավականին սահմանափակ շրջանակում է: Այստեղ ես զրկված եմ ազատ գործելուց, որոնք ինձ անհրաժեշտ են հայրենիքին ծառայելու համար»<sup>5</sup>, - ամփոփում է իր նամակը Ստ. Նազարյանցը:

Հավելենք, որ նամակում արտահայտած շատ մտքեր ու առաջարկություններ Լազարյանները հաշվի առան իրենց հետագա աշխատանքներում, հատկապես եվրոպական ուսուցման ու գիտնականների հետ համագործակցության, հայ հին մատենագրության հրատարակության առումով: Նրանք նույնիսկ որոշ ժամանակով Ստ. Նազարյանցին հրավիրեցին դասավանդելու Լազարյան ճեմարանում, սակայն այն, ինչի մասին գրել և խորհրդածել է մեծ հայագետը, անշուշտ, արժանի է ուշադրության և ավստոսալ կարելի է, որ նամակը մինչ օրս պատշաճ ուշադրության չի արժանացել հայագիտության մեջ:

**Айказ Оганесян, ВИДЕНИЕ НАЦИОНАЛЬНОГО ОБРАЗОВАНИЯ СТЕПАНОСА НАЗАРЯНЦА.** В статье рассматриваются видение и точка зрения известного армянского публициста и ученого С. Назарянца о национальном образовании. В письме адресованном основателям Лазаревского института Восточных языков в Москве, видным общественным деятелям Ивану и Христофору Лазаревым, С. Назарянц особо подчеркивает глуп-

<sup>1</sup> Նույն տեղում, թ.11:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> Նույն տեղում:

бокое изучение родного языка, литературы, историю как основных дисциплин, акцентирует необходимость обучения подрастающего поколения Армении в духе национального самосознания и патриотического воспитания. В качестве первого и важного шага Ст. Назарянц предлагает изменить методы и формы обучения, присущие образовательной системе Армении. В этом отношении, изложенные в статье взгляды С. Назарянца не потеряли свою актуальность и для нынешних времен.

*Ключевые слова:* Матенадаран, архив Лазаревых, Ст. Назарянц, национальное образование, принципы, язык, история, национальное мышление.

**Haikaz Hovhannisyan. VISION OF STEPANOS NAZARYANTS ABOUT NATIONAL EDUCATION.** The article considers the vision and points of view of the famous Armenian publicist and scientist St. Nazaryants about national education. In a letter addressed to the founders of the Lazarevsky Institute of Oriental Languages in Moscow, prominent public figures Ivan and Christopher Lazarevs, St. Nazaryants especially emphasizes the thorough study of the native language, literature, history as the main disciplines, emphasizes the need to teach the younger generation of Armenia in the spirit of national identity and patriotic education. As a first and important step, St. Nazaryants suggests changing the methods and forms of training inherent in the educational system of Armenia. In this regard, the views of St. Nazaryants set forth in the article have not lost their relevance for modern times.

*Key words:* Matenadaran, archive of the Lazarevs, St. Nazaryants, national education, principles, language, history, national thinking.